

Զ Կ Ն Ո Ր Ս.

(Գէթէյից)

Զուրը կարկաչում, ջուրը ուռչում էր.
 Ձկնորսը նորա ափին լուռ նստած
 Կարթին անխռով հանդարտ նայում էր
 Քաղցր քննի մէջ հոգւով ընկղմած,
 Եւ մինչ նստած էր և կարթին նայում —
 Ահա փոթորկում բաղխում են ալիք.
 Յուզուած ջրիցը դուրս է սլանում
 Նորա առաջը մի կոյս գեղեցիկ.

Անուշ երգեց կոյսն, և նորան ասաց.
 Հպատակներիս « ինչո՞ւ » ես որսում.
 Մարդկային մտքով որոգայթ լարած
 Մահաբեր տօթին է՞ր ես զոհ մատնում:
 Թէ գիտնայիր, ի՞նչպէս երջանիկ
 Զրի խորքումը ապրում են ձկներն,
 Յած կիջնէիր դու. կըսիրէիր ալիք —
 Կեանքդ այն ժամանակ քաղցրը կըլինէր

Ոսկեփայլ արփին, արծաթեայ լուսին
 Միթէ ծովի մէջ չե՞ն միշտ զովանում.
 Նոցա պատկերը այնտեղ խնդադին
 Մի՞թէ առաւել չէ արտափայլում:
 Եւ ջինջ երկինքը դրաւում չէ՞ քեզ,
 Երբ վըճիւ ջբրումն է նա նկարուած.
 Եւ քո պատկերը — երբ անդ կընայես,
 Զէ՞ հրապուրում դէպ ջուրն յուզուած » :

Զուրը կարկաչում, ջուրը ուռչում էր,
 Եւ մերկ ոտները ձկնորսի թրջում.
 Յանկութեամբ նորա սիրտը լցվումէր,
 Ասես թէ սիրոյ առած էր ողջոյն,
 Կոյսը երգում է և նորան դիւթում,
 Ահա ձկնորսը ջրասոյզ եղաւ.
 Զուրը քարշում էր ձկնորսը դնում —
 Ահա և անհետ նա ընդ միշտ կորաւ.

Յ. Յովհաննիսեան.